Ռուսաստանի համագումարն ընդունեց հայտարարություն. «Դադարեցնել արյունահեղությունը եւ մարդու իրավունքների ոտնահարումը»

Մոսկվա, մեր հատուկ թղթակից ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

Մայիսի 25-ի կեսօրին, ՌԽՖՍՀ ժողպատգամավորների համագումարը քննարկեց Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանամերձ շրջաններում ստեղծված կացությունը եւ ընդունեց համապատասխան հայտարարություն: Համագումարի մամլո կենտրոնում այդ հարցի նկատմամբ ըզգացվում էր որոշակի հետաքրքրություն:

Համագումարում ելույթ ունեցավ նախօրյակին Հայաստանից վերադարձած ժողպատգամավոր Ֆեոդոր Շելով-Կովեդյաեւը: Նա հանդես գալով թեժ վայրերն այցելած պատգամավորական խմբի անունից, ասաց, որ իրենք տեղում պարզել են բնակչության շրջանում երկուստեք առկա զոհերի, միայն հայկական կողմում եղած զինական խմբերի փաստերը, խոստանալով բացատրել երեւույթը: Ֆ. Շելով-Կովեդյաեւն ասաց, որ Ադրբեջան մտնելու արտոնություն չի տրվել իրենց, թեեւ Մութալիբովն այն խոստացել էր: Ըստ ժողպատգամավորի, կոնֆլիկտը կրում է ոչ թե ազգամիջյան, այլ քաղաքական բնույթ, որին համամիտ են երկու հանրապետությունների ղեկավարները: Հայաստանի կողմի կարծիքով այն հնարավոր եղավ «9+1» Միութենական համաձայնագրի ստորագրումից հետո՝ Կենտրոնի նոմենկլատուրային աշխատակիցների՝ Ադրբեջանի իրենց գործընկերներին աջակցելու նպատակով:

Շելով-Կովեդյաեւն անդրադառնում է նաեւ դեպքերից առաջ Հայաստանի սահմանամերձ գոտում գտնվող ուժերի դեպի Երեւան մեկնելուն, որը եւ սրել էր իրավիճակը: Զորամասի տեղափոխման ժամանակ տեղացի բնակիչները զինաթափել էին հեռացող զինվորներին եւ այդ երեւույթը ընդունելով էին ընդունել անգամ զինաթափված այն ապաները, որոնց հետ հանդիպել էին ռուս պատգամավորները: Ոսկեպարի շրջան մտած 31-747 բանակային զորամասի ապաները հայտնեցին, որ լեռներում լավող ամեն մի կրակոցին, իբր հայերի կողմից արձակված, իրենք պատասխանում էին իրենց ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով՝ հրետանիով, տանկերով, ուղղաթիռների հրթիռային միջոցներով (ՆՈՒՌՍ-եր): Ապա նա պարզաբանեց, թե ինչ է իրենից ներկայացնում «հայ գրոհային» հասկացությունը, որը հրամցվում է զանգվածային միջոցներով եւ հատկապես «Պրավդա»-ի էջերում: Հավանաբար, դրանք Ոսկեպարի անտառներում թաքնվող կանայք ու երեխաներն էին, ինչպես նաեւ 11 այն միլիցիոներները, որոնք սպանվեցին նույն շրջանում, կամ Հայաստանի ՊԱԿ-ի աշխատակիցները:

Դահլիճում նստած պատգամավորները, որ մի քանի անգամ ընդհատել էին Շելով-Կովեդյաեւի ելույթը, այս խոսքերից հետո վերջնականապես լռեցրին նրան եւ ժողովը նախագահող Բորիս Ելցինը ձայն տվեց ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի Մարդու իրավունքների կոմիտեի նախագահ Սերգեյ Կովալյովին: Նա նշեց, որ կոմիտեն 6 ժամ քննարկելով հավաքված նյութերը, հետապնդել է մեկ նպատակ՝ հանդես չըգալ իբրեւ դատավոր, այլ խորամուխ լինել ստեղծված իրավիճակում, Գերագույն խորհրդին երաշխավորելով իրադրության մեջ պարզություն մտցնող կարծիք:

Ս. Կովալյովի ասելով, կոմիտեն լսել է Հայաստանի եւ Ադրբեջանի ներկայացուցիչների, վկաների, միութենական գերատեսչությունների ներկայացուցիչների: Ադրբեջանական կողմից չեն ներկայացել պաշտոնական ներկայացուցիչները, թեեւ քանիցս հրավիրվել էին:

Քննարկման արդյունքները կոմիտեում ամփոփվել էին հետեւյալ կերպ.

ա. Իրոք հայկական գյուղերի տեղահանում է կատարվել, որը հաստատվել է թե՛ Հայաստանի դատախազության եւ թե ԽՍՀՄ ՆԳՆ աշխատակիցների կողմից:

բ. Կատարվել է պատանդների առեւանգում եւ փոխանակում:

գ. ԼՂԻՄ-ի հայկական գյուղերում Ադրբեջանի ՕՄՈՆ-ը կատարել է ահաբեկչական գործողություններ, թալան:

Ս. Կովալյովը վերջում հայտարարեց, որ կոմիտեն միանում է պատգամավորական մի քանի խմբերի կողմից ներկայացված հայտարարությանը:

Այնուհետեւ Բ. Ելցինը քվեարկության դրեց հայտարարության տեքստը, որն անցավ 541 կողմ եւ 57 դեմ հարաբերությամբ:

«Այս փաստաթղթով Ռուսաստանը հայտնեց իր կարծիքը եւ թող աշխարհն իմանա այս մասին», քննարկումից հետո, մեր հարցումին ի պատասխան, ասաց Զորի Բալայանը: □